

ՄԱՏԵՎԱԳՐԱԿԱՆ

(ԽԵԿ) ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹԱԿՈՒՐԱՆՑԻ

Բ. ԳԱՆՁԵՐ

= 1 =

ԳԱՆՁ ՎԵՅ ԱՒՌԻՐ ԾՆՆԴԵԱՆ

Ա.

Յանեղական լուսոյն խոնարհեալ,
յերկնից իջեալ եւ առ մեզ եկեալ,
բանդ որ ընդ Հաւը յմրկրի երեւեալ,
եւ ի կուսէն մարմին ըզգեցեալ,
Աստուած եւ մարդ նոր միաւորեալ,
մարդ եւ Աստուած անշփոթ միացեալ,
ի Բեթղանէմ ի յայրին ծընեալ,
խանձարրապատ ի մըսուր եղեալ,
յարեւեյեան մոգուցըն պատուեալ,
ոսկի, կընդրուկ եւ զըմուռ բերեալ.
Բարեխսաւութեամբ մաւը քո եւ կուսի,
զմերս ընկալցիս պատարագ բանի.
Աղաչեմք :

Ը.

Ողորմեցար ծեռաց քոց ստեղծեալ,
ազգի մարդկան, մեղաւը վարատեալ,
զիաւտ քո յերկինս անմոլար թողեալ,
մոլորելոցս ի խընդիր եկեալ,
զոր եւ զբտեալ եւ ի յուս բարձեալ,
եւ յերկնային փարախըն մուծեալ,
ըզնրագ մարմնոյդ լուսով քո վառեալ,
եւ անմաքուր տանս աւել ածեալ.
Գըտեր զպատկեր քո նորացուցեալ,
եւ երկնայնոցըն հաղորդս արարեալ:
Բար.

Բնագիր Ծ = Զեռ. Ա. Յ. Թ. 135:
Հմմ. Շ = Զեռ. Ա. Յ. Թ. 278, Գանձ-
գիրք, ԺԵ. գար: Նոյնը կը գտնուի ըստ
Conybeareի Յուցակին 1411-2 թուին գըր-
ուած Գանձգրքի մը, յերնագրուած՝

Գանձ Յովհաննու Թէկուրացւոյ (էջ 113թ 17):
Բ. - 2. - Վարատեալ, վայր անկեռլ, Շ:
6. - մուծեալ, տածեալ, Շ:
7. - վառեալ, լուցեալ, Շ:
9. - զըմուր, զըտեալ, Շ:

Գ.

Վերապատուեալդ ի հրաբուն զաւրաց ,
անլըռելի ծայնիւ սրբասաց .
ի սկըզբանէ Բանդ Հաւը առ Աստուած ,
եղեր լըրումըն տեսանողաց .
զգեցար ըգկերպս հողեղինաց ,
նրկարագիր Հաւըզդ եւ լոյս փառաց .
զոր աւրհնութիւն ըստ կարի մըտաց ,
քեզ մատուցուք Տէք ըստ արժանեաց .
Փառք պատիւ և երկրպագութիւն ,
հացիդ կենաց եւ մեր փրրկանաց :
Բար .

Դ.

Այսաւը երկինք ի վերուստ ցընծան ,
եւ լուսաւորքն պայծառացան .
այսաւը երկիրըս նորոգեցան ,
բանզի որումըն չարին բարձան .
այսաւը խաւարըն կռապաշութեան ,
հալածեցան եւ անհետ կորեան .
ցաւք եւ անէծք , և երկունք ծնընդեան ,
այսաւը բարձան ծնընդեամբ կուսական .
այսաւը հըրեշտակը ընդ որդւոց մարդկան ,
փառաւորեն զԱստուած յաւիտեան :
Բար .

Ե.

Նոր աւրհնութիւն նորոգ բազմացաւ ,
նոր արքային որ այսաւը ծընսաւ .
անտանելին ի մարմնի տարաւ ,
եւ անսահմանըն սահմանեցաւ .
անժամանակն ընդ ժամանակաւ ,
եւ շինաւորցն Աստուած մանկացաւ .
հուրն ի խըռիւ եղեալ ոչ կիզաւ ,
եւ մորենի չկոյսն անուանեցաւ .
զի ի սկըզբան մարդըն ցանկացաւ
աստուածանալ , եւ անդ ոչ հասաւ .
իսկ արարին եկեալ մարդացաւ ,
վասն այնորիկ մարդն աստուածացաւ :
Բար .

Գ. — 1. — հրաբուն , հրեղէն , Շ :

2. — անլըռելի , անբաւելի , Շ :

3. — Հաւը առ , առ Հաւը , Շ :

6. — նըկարագիրըդ Հաւը քո փա-

ռաց , Շ :

8. — մատուցուք , մատուք , Մ :

7. — 8. — բարձան , լուծան , Շ :

9. — այսաւը , որով , Շ :

6. — 8. — մորենի , մաւրենի , Մ . — ան-

ռաց , Շ : ուանեցաւ , կոչեցաւ , Շ :

Զ.

Էն միշտ յէջն, միշտ Հաւրէն ծընեալ,
կերպիւ մարդկան յերկրի երեւեալ.
որպէս զանձրեւ ի գեղման իջեալ,
քանզի Դաւիթ այսպէս վըկայեալ.
Կոյսըն յըղացեալ, զՄանուէլ ծընեալ,
եւ ի յերկրի ընդ մարդկան շըրջեալ.
վէմն ի լեռնէն անձեռին հատեալ,
եւ Բելիար եղեւ խորտակեալ.
զմարգարէիցըն կանխաւ ճառեալ,
այսաւը զըուրին եկեալ կատարեալ.
որ էր ընդ Հաւը ի յաթոռ բազմեալ,
եւ ընդ Հոգւոյն յաւիտեանս աւրհնեալ:
Ցիշ. : Եւ եւս. : Զանձ. :

Է.

Սուրբ սրբունի մայրդ անհարօնացեալ,
ի հրակերպից դասուցն երանեալ.
սափոր ոսկի, գաւազան ծաղկեալ,
տախտակ բանին, մատամբ ծեռագրեալ.
լեառըն խընկեալ, եւ հովիտ ծաղկեալ,
դուռըն փակեալ, եւ աղբեւը կընթեալ.
աթոռ կազմեալ, ուր արքայն բազմեալ,
ամպ լուսափայլ, ցող բաղցրածաւալ.
զերգը մատոյ, զնուէրս աղերսեալ,
առ Բանն Աստուած ի քէն մարմնացեալ.
լեր բարեխաւս բանիդ մարդացեալ,
տեսլեան իւրոյ մեզ արժանանալ. (*)
եւ ի զալուստն իւր սուրբ հանդերծեալ,
ի յանդրանկաց դասըն միանալ:
Ող. :

= 2 =

ԳԱՆՉ ՀԻՆԳ ԱԽՈՒՐ ՀՈԳՈՅ ԳԱԼՍՏԵԱՆ

Ա.

Յաւէտ իսկապէս, ընդ Հաւը միապէս, եւ աստուածապէս.
Ելումն էապէս, անըսպառապէս, եւ անհատապէս.

Զ. — 6. — եւ, որ, Շ:

է. — 1. — սուրբ, չունի, Շ:

4. — ձեռագրեալ, ձեսպրեալ, Շ:

11. — բանիդ, բանին, Շ:

14. — յանդրանկաց, յարդարոց, Շ:

(*) Վերջին երկու տողերէն առաջ Շ
օրինակը ունի յաւելուածաբար հետեւեալը.

եւ զստացող այս զանձիս յիշեալ,

Տէր Յովաննէսն որ ես զսա կազմեալ.

Բնագիր Մ. Հմմա. Դ. = Զեռ. Ա. Յ.

թ. 2011, Գանձգիրք, թէ. 1460, բուրգիր

լաւ. Նոյնը կը գտնուի նաև Ա. Ղազարու

1394 թուականով մէկ Գանձարանին մէջ:

Վերնագիր. Յովանէս Թըլգուրանցոյ

ասացեալ վասն Հոգոյն Ա. Դալըստեանն, Դ.

ինքնիշխանապէս, հրզօրեղապէս, եւ նոյն տիրապէս.
Որդոյ նմանապէս, փառաւորապէս, եւ արարչապէս.
ինքնազաւրապէս, կատարելապէս, բանաւորապէս.
որոշելապէս, անբաժանապէս, միաստուածապէս.
անորոշապէս, անգիտելապէս, եւ անյեղապէս.
ահա կեցո զմեզ, Տէր, եւ արդարացո, Հոգի Աստուծոյ:
Ա. . . . :

❖.

Որ ի ջուրս գոլով, ստեղծագործելով, ըզբեզ յայտնելով.
զիրեշտական առնելով, դասիւ եւ կարզով, շնորհրս բաշխելով.
զերկիր ստեղծուածով, բուսով եւ տրնկով, խոտով բանջարով.
զերկինս երկնայնով, զարդարեալ գեղով, լուսնով և արեւով.
ըզծովըս լընլով, լողական գեռնով, մեծամեծ կիտով.
զաւդս օդականով, զարդարեալ շըբով, թըռչուն հաւերով.
զազանս անամնով, եւ չորքուտանով, սողունս առնելով.
զԱդամ ստեղծելով, ի տիպ առնելով, քեզ նըման գոլով.
յԱդամ փըչլով, զոր ստեղծեալ ծեռով, հոգով կենդանով.
պարզեւըս տալով, նոխ ցուցանելով, երկիր տիրելով:
Ահա . . . :

❖.

Վեհ երեւելով, Ադամ իւր պատուվ, զերազանց գոլով.
իմաստ շնորհելով, բահանայելով, թագաւորելով.
ի դրախտին զնելով, բազմախիտ ծառով, կանաչ տերեւով.
զանազան պրտով, անթառամ գունով, եւ անուշ հոտով.
պատուիրան տալով, բազմացն ուտելով, միոյն չուտելով.
զոր ոչ պահելով, մերկացաւ փութով, ծածկեալ թըզենով.
զնոյն այսաւր զոլով, բո պայծառ լուսով, նոր զարդարելով:
Ահա . . . :

❖.

Ազբեր գիտութեան, պարզեւ բարութեան, տուրք ողորմութեան.
Հոգիդ զաւրութեան, եւ իմաստութեան, հոգի գիտութեան.
հոգի խորհըրդեան, հանճար իմացման, առաջնորդական.
երկիւղածութեան, աստուածպաշտութեան^{իւ} յաջողութեան,
Քոյին զաւրութեամբ ջուրք բաժանեցան, ճանապարհը բացան.
մատըն հայրական, աստուածայնըման, ստանաս զամենայն.
յորժամ եւ յորքան ախորժես զարժանն տաս անհատական.
բահանայական, եաւթըն խորհըրդեան, եկեղեցական:
Ահա . . . :

❖.

Նոր ծայնիւ գոչեալ, նոր երգս յաւրինեալ, նուազիւ պար առեալ.
Հոգւոյդ պարզեւեալ, որ այսաւր իջեալ, յառաքեալս հանգեալ.
զնոսա մըկըբտեալ, մարմնով հրայգինեալ, եւ հոգով մաքրեալ.

Ա. — 4. — . . . և արարչապէս, փառաւ
որապէս, Ղ.:

5. — . . . բաւականապէս, Ղ.:

Դ. — 4. — անոյշ, Ղ.:

Դ. — 6. — ստանա, Մ.:

Ե. — 1. — նվազիւ, Մ.:

զորդոյ խոստացեալ, եւ զհաւը պարզեւեալ, քո տէր կատարեալ.
ծիր առատ հեղեալ, պարզեւը բաշխեալ, լեզուս բաժանեալ:
Ահա . . . :

Զ.

Նորա որք տեսեալ, որք անդ պատրաստեալ, յաշխարհաց եկեալ.
Պարթեւքըն սարսեալ, Մարքն զարմացեալ, Դամիրք հիացեալ.
Կրեստացիք լըւեալ, Արարիք սաքրեալ, և այլք պարաւանդեալ.
զոր Պետրոս ելեալ, զԵովիէլ բերեալ, զգիրն յայտ արարեալ.
որում հաւանեալ, եւ հաւատացեալ, երեք հազար լեալ.
եւս առաւելեալ, թիւ քան զթիւ անցեալ, անբաւս երեւեալ:
Ահա . . . :

Է.

Նոր նորոգաւղին, Հոգւոյ ճշմարտին, փառս տացուք նըմին,
որ ընդ հրեշտակին, յաւետին կուսին, յիջանել բանին.
կազմոյ տանարին, լինէր էակցին, ստեղծանէր մարմին.
առ Յորդանանին, աղաւնայկերպին, հանգչէր առ Որդին.
վասն որոյ տանջին, որք հայհոյեցին, զլստուած սուրբ Հոգին.
եւ ոչ ունիցին նորայ թողութիւն աստ և յաւիտենին:
Ահա . . . :

Ը.

Եիդ երգեցուք, զեդ փառատրեսցուք, յեէդ խնդրեսցուք.
հոգւով մաքրեսցուք, մարմնով սըրբեսցուք, զի արժանասցուք.
ըզմեղըս թողցուք Յեւ անարգեսցուք, երես դարձուսցուք.
յԱստուած դիմեսցուք, բարիս գործեսցուք, աղօթս արասցուք.
զտեարըս պաշտեսցուք, զծընողս պատուեսցուք, զիրեար սիրեսցուք.
ըեզ ծառայեսցուք, սպասաւորեսցուք, երկըրպագեսցուք.
զբեզ դաւանեսցուք, խոստովանեսցուք, եւ հաւատասցուք:
շնորհիւ քո լըցցուք, զմեզ կանոնեսցուք, զայլըս խրատեսցուք:
Յիշ.: Եւ Եւս.: Զան.:

Թ.

Սուրբ Կոյս Մարիամ, վարդատիպ փայլմամք, ծաղիկ անթառամ.
ի քէն աղերսամ, փափաքեալ ցանկամ, բաղծանաւք տարփամ.
հոգովըս տենչամ, սարսեմ եւ դողամ, զի արժանանամ.
հոգով ժըրանամ, մարմնով զգաստանամ, եւ կարողանամ.
ի մեղաց դառնամ, արտասուեմ եւ լամ, զի արդարանամ.
սըրտիւ հաւատամ, առ քեզ դիմեալ գամ, մայրըդ բարեխնամ.
զի ի միւսանգամ, զալըստեանն յայնծամ, նորոգեալ ցընծամ:
Աղ. . . . :

Ն. ԵՊՍ. ՆՌՎԱԿԱՆ

(15)

Զ. — 1. — . . . որք անդ պատահեալ . . . , Ղ. : կ. — Զունի, Ղ. :